տիչն[1] ձեր մեսիայն, որ է[2] քՀ զոր դուք ակն ունիք գալստեան նՀր սա եկն ի քաղաքն դաւթի, զոր ինչ վՀս իւր գրեալ էր կատարեաց, և ապա

Յ. ապա համբարձաւ յերկինս և զմեզ[3] առաքեաց
5 ի հայաստան քարոզել զանուն նՀր. և ապա հարցին ցնա հաւատաց Աբգար թագաւորն մեր[4]. յայնժամ ասէ առաքեՀլն այո հաւատարիմ իշխանն իմ բագարատ։ Եւ իբրև[5] լուաւ բագարՀտ զլուր մեսիային և զհաւատալն արքային, մանաւանդ բժշկուիՀն նՀր,
10 որ անողջանալի էր, ապա հրամայեաց ամենեցունց[6] լսել քարոզուեՀն թաթէոսի։ Յայնժամ մկրտեցան բնակիչքն յաղթամարու. և զկնի սՀր սՀբն թաթէոս իւր ձեռով փորեաց զարձանն խաչաձև կնքեաց սՀբ մեռոնաւ,[7] զոր բերեալ էին[8] և[9] ունէին ընդ ինքեանս[10] հանապազ. ևս բազումն խաչս ձևացուցին,
15 և օծանէին, և հարկանէին զբևեռս երկաթիս. զի[11] նշան սՀբ խաչերացս էր այս.[12] իսկ մեծ խաչն զոր գրեաց ի վՀր[13] վիմին, ունելով զդէմն[14] իւր ի կապան ոստան քաղՀքին. ևս մնացին բազում
20 աւուրս անդ. ոչ սակաւ եղև

---

1 Զ. ն նօտրգ.
2 Զ. տղմ.
3 առաջին. զ տղմ.
4 Զ. տղմ.
5 Զ. բրեւ.
6 Զ. ամենեցուցն
7 Զ. ոն տղմ.
8 Զ. ին (ոչ էին) և տղմ.
9 Զ. տղմ.
10 Զ. տղմ. և նօտրգ.
11 Զ. զի՞
12 Զ. տղմ.
13 Զ. ի վՀր նօտրգ. և յետոյ գրուած վՀր տղմ.
14 Զ. զ տղմ.